ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 146 - Ա
22 օգոստոսի 2014 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<թ>> ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված <<Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ>>-ի 7-րդ կետը

որոշում եմ՝

1. Հաստատել 23.08.2014թ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Լուսակունքի ԱԱՊԿ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ Հակոբյան Անդրանիկ /մարզպետի պաշտոնակատար/, Հովհաննիսյան Դերենիկ /մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ/, Մելքոնյան Աշոտ /մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/, Բաղալյան Գարիկ/ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/, Ասատրյան Իվան/ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ/, Օհանյան Հրանդիկ/ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի վարիչ/, Ստեփանյան Էդվարդ /մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման /մարզային հողային պետական տեսչության/ բաժնի վարիչ/:
2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Ա. Հակոբյանին, քարտուղար՝ Հ. Օհանյանին:
3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ